ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

№ 77-Ա

20 օգոստոսի 2013թ.

ՆԱԻՐԱ ԱՎԱՆԵՍՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի <<Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին>> № 436-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի <<դ>> ենթակետով և 14-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2013 թվականի օգոստոսի 15-ի № 01/13/1/2470-13 գրությունը՝

կ ա ր գ ա դ ր ում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի /ծածկագիր՝ 68-2.1-6/ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Նաիրա Ավանեսյանի հետ 2013 թվականի օգոստոսի 20-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր մինչև քաղաքացիական ծառայության օրենսդրությամբ նախատեսված ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացումը:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2013թ. օգոստոսի 20
ք. Կապան